

## ԿԱՆԱՅԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՂԱՔԱԿԱՆ ԿՑԱՆՔՈՒՄ

### 3. 3. ՀԱԿՈՐՑԱՆ

Մարդն աշխարհ է գալիս բնական և անօտարելի իրավունքներով: Այսօր առավել քան երբևէ կարևորվում են մարդու բնական իրավունքների և ազատությունների էության բացահայտումը, իրավական ակտերով դրանց լիարժեք ամրագրումը, մարդուն իր իրավունքների ուսուցումը և դրանց իրականացումն ու պաշտպանումը: Մարդու իրավունքներ ասելով՝ անկասկած մկատի են առնվում թե՛ տղամարդու, թե՛ կնոջ իրավունքները: Սակայն, ցավոք, տարբեր երկրների իրավական ու քաղաքական փաստաթղթերի վերլուծությունը ցույց է տալիս, որ շատ հաճախ խտրականություն է դրվում տղամարդու և կնոջ իրավունքների միջև: Երկրներ կան, որտեղ կինը չունի ընտրելու իրավունք, իսկ ընտրվելու իրավունքի մասին խոսք անգամ չի կարող լինել: Այսինքն՝ մասն պետություններում կինը չի համարվում հասարակության իրավահավասար և լիարժեք անդամ: Այդ է պատճառը, որ միջազգային շատ կառույցներ և հատկապես ՄԱԿ-ը վերջին 50 տարում իրենց գործունեության կիզակետում են պահում կանանց հիմնախնդիրները և բազմաթիվ կոնվենցիաներով, համաձայնագրերով, պայմանագրերով ու միջազգային կոնֆերանսներով փորձում են մեղմել ստեղծված իրավիճակը՝ պետությունների ղեկավարների ուշադրությունը հրավիրելով անչափ կարևոր այս խնդրի վրա: Եվ դա բնական է, քանի որ կանայք կազմում են մոլորակի բնակչության կեսից ավելին, իսկ աշխատուժի մոտ կեսը (47.8%)<sup>1</sup>:

Ստեղծված իրավիճակի հիմնական պատճառն այն է, որ մինչև օրս Աշխարհի մոդելը գծել ու շարունակում են գծել տղամարդիկ, ուստի կանայք ստիպված են ապրել և աշխատել այդ մոդելի շրջանակներում: Ինքնին հասկանալի է, որ գործող մոդելը փոխելու համար կանայք պետք է ազդեցիկ ուժ դառնան պառլամենտներում, անձամբ մասնակցեն իրենց վերաբերող օրենքների ընդունմանը:

ՄԱԿ-ի «Կանանց մկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի հիմնարար սկզբունքներից են կանանց և տղամարդկանց հավասար մասնակցությունը հասարակական-քաղաքական կյանքին, աշխարհի բոլոր երկրներում կանանց և տղամարդկանց իրավահավասարությունն ապահովող պայմանների ստեղծումը, պետությունների կառավարման գործում կանանց հավասար մասնակցությունը և նրանց լիարժեք ինքնադրսևորումը: Կոնվենցիայի 3-րդ հոդվածում նշված է, որ անհրաժեշտ է «... ապահովել կանանց լիարժեք զարգացումն ու առաջադիմությունը, այն հաշվով, որպեսզի նրանց համար երաշխավորվեն տղամարդկանց հետ հավասարության հիման վրա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների իրականացումն ու դրանից օգտվելը»<sup>2</sup>: Կոնվենցիայի պահանջների կատարման էին մվիրված ՄԱԿ-ի կողմից կազմակերպված համաշխարհային մի շարք կոնֆերանսներ (Նայրոբիից մինչև Պեկին): Իսկ 1995 թ. ՄԱԿ-ի կողմից կազմակերպված կանանց 4-րդ համաշխարհային համաժողովի ընդունած Հոչակագիրը և գործողությունների ծրագիրը, ինչպես նաև 2000թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի հատուկ նստաշրջանի՝ «Գեներային հավասարությունը, զարգացումը և խաղաղությունը 21-րդ դարում» (Պեկին+5) փաստաթղթերը շրջադարձային նշանակություն ունեցան ամբողջ աշխարհում կանանց սոցիալական, մշակութային, տղնտեսական և հատկապես քաղաքական կարգավիճակի բարելավման ուղղությամբ:

<sup>1</sup> St' u Inter-Parliamentary Union, August 2003, Women in National Parliaments. (Internet) <http://www.ipu.org>.

<sup>2</sup> St' u «Մարդու իրավունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրեր. փաստաթղթերի ժողովածու», Գիրք Ա, Եր., 2001, էջ 406:

Այսուհանդերձ հարկ է նշել, որ համաշխարհային քաղաքակրթությունը դեռևս չի լուծել մարդկության առջև ծառայած հիմնահանգի ղեկ չեն ստեղծվել տղամարդկանց և կանանց գործընկերության համահավասար պայմաններ: Ավելին, հավասար հնարավորությունների ապահովման պահանջը և իրավահավասարության սկզբունքները նույնիսկ Եվրոպայում և ԱՄՆ-ում առայժմ լուր հայտարարություններ են և ամբողջությամբ չեն իրականացվում:

Ընդհանուր առմամբ, վերջին հիսնամյակում աշխարհի 186 երկրներից 42-ում ընդհանուր թվով 79 անգամ պատվամեծի նախագահ են ընտրվել կանայք (աշխարհագրական տեսակետից պատկերը հետևյալն է՝ եվրոպական երկրներ՝ 17, ամերիկյան՝ 13, ասիական՝ 3 և այլն<sup>1</sup>), իսկ այսօր աշխարհի 25 երկրների պատվամեծներ դեկլարում են կանայք, սակայն դա չափազանց ցածր է կանանց իրական հնարավորություններից: Բնավ պատահական չէ, որ, հաշվի առնելով Երկիր մոլորակի վրա կանանց հզոր ներուժը, ՄԱԿ-ը Հազարամյակի հռչակագրում և զարգացման նպատակներում խիստ կարևորում է սեռերի միջև իրավահավասարությունը և առաջարկում է կանանց օժտել ավելի մեծ լիազորություններով, առանց որի անհնար է երկրագնդի վրա ապահովել կայուն զարգացում ու առաջընթաց:

Պատահական չէ և այն, որ տարբեր հռչակագրերում և մասնավորապես Միջխորհրդարանական միության համընդհանուր հռչակագրի 4-րդ մասում նշված է. «Ժողովրդավարության հասնելը տղամարդկանց և կանանց միջև ենթադրում է իրական գործընկերություն հասարակությանը վերաբերող գործերում, երբ նրանք աշխատում են հավասար և միմյանց լրացնելով, փոխադարձաբար հարստանալով՝ իրենց իսկ տարբերությունների հաշվառմամբ»: Ավելին, ներկայումս իրավացիորեն կարևորվում է ցանկացած ժողովրդավարական երկրում մարդու իրավունքների, այդ թվում՝ ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց քաղաքական իրավունքների պաշտպանությունը:

Հայաստանի Հանրապետության կանայք առերևույթ կարծես դժգոհելու ոչ մի հիմք չունեն, քանզի Սահմանադրության 27-րդ հոդվածը նախատեսում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտրելու և ընտրվելու իրավունքը, որը վերաբերում է թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց հավասարապես<sup>2</sup>: Բայց դա միայն առերևույթ, որովհետև, ճիշտ է, Հանրապետության օրենքների գենդերային վերլուծությունից պարզ է դառնում, որ օրենքներում չկա խտրականություն, ամբողջովին է տղամարդկանց և կանանց իրավահավասարության սկզբունքը, որը համահունչ է միջազգային փաստաթղթերին, սակայն, կարծում են, նույնիսկ ավելորդ է ասել, որ յուրաքանչյուր երկրում ժողովրդավարության զարգացման աստիճանը որոշվում է ոչ միայն ընդունված օրենքներով, այլև այն բանով, թե հասարակական-քաղաքական գործընթացներին ինչքանով են մասնակցում կանայք, ինչպես են լուծվում նրանց կրթության, առողջության, աշխատանքի հիմնահարցերը, որքանով են կանայք մասնակցում բարձր մակարդակներում որոշումների ընդունմանը, ինչպիսին են կանանց համար ստեղծված պայմանները իրենց ընդունակությունները լիարժեք դրսևորելու, ունեցած հնարավորությունները իրացնելու տեսանկյունից: Ցավոք, այդ տեսակետից քիչ բան ունենք հպարտանալու, որովհետև մեզանում «կինը և իշխանությունը», «կինը և դիվանագիտությունը» հասկացությունները միշտ չէ որ ընկալվում են համարժեք:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ որքան զարգացած է հասարակությունը, այնքան մեծ է կանանց մասնակցությունը քաղաքականության մեջ և բարձր մակարդակներում որոշումների ընդունմանը: Այսպես, Սկանդինավյան երկրներում, ուր բնակչության կենսամակարդակը շատ բարձր է, կանանց մասնակցությունը պատվամեծում և կառավարությունում հասնում է 45%-ի, որը աշխարհում ամենաբարձր ցուցանիշն է: Իսկ ասիական կամ արաբական մի շարք երկրների պատվամեծներում նույնիսկ կին պատգամավոր չկա: Ընդհանուր առմամբ կանայք կազմում են աշխարհի պատվամեծականների

<sup>1</sup> Տե՛ս «Женщины в Парламенте, По ту сторону «ФФ», Ер., 2003, էջ 27: Այսպես՝ «Женщины в Парламенте...» և էջը:  
<sup>2</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն», Եր., 1997, էջ 16:

15,5%-ը, Հյուսիսային Եվրոպայի երկրներում՝ 38,8%-ը, ԵԱՀԿ եվրոպական երկրներում՝ 16,4%-ը, Ասիայում՝ 15,4%-ը, Աֆրիկայում՝ 12,8%-ը, իսկ արաբական երկրներում՝ 4,3%-ը<sup>5</sup>:

Այս առումով հետաքրքիր է կատարել պատմական մի փոքրիկ անդրադարձ. առաջին երկիրը, որտեղ կնոջը ընտրելու իրավունք տրվեց (1893 թ.), Նոր Զելանդիան էր: Սակայն իրավահավասարությունն առաջին անգամ ընդունվեց և ամրագրվեց Ֆինլանդիայում, որտեղ կանայք ընտրելու և ընտրվելու իրավունք ստացան 1906-ին: Ֆինլանդիայից հետ չմնաց մեր առաջին հանրապետությունը, որտեղ թեև մոր-մոր էր դրվում պետականության հիմքերը, առաջին դեկրետներից մեկով (1918 թ.) սահմանվեց կանանց և՛ ընտրելու, և՛ ընտրվելու իրավունքը: Առաջին հանրապետության առաջին պառլամենտում կար չորս կին քաղաքական գործիչ և մույնիսկ կին դեսպան՝ Ըապոնիայում: Եվ դա այն դեպքում, երբ ջրանից ավելի քան երեսույն տարի հետո միայն՝ 1952 թ. դեկտեմբերի 20-ին, ընդունվեց «Կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիան», որտեղ ասվում է, որ «կանայք ունեն ընտրվելու իրավունք տղամարդկանց հավասար պայմաններում՝ առանց որևէ խտրականության»՝ սահմանված ազգային օրենսդրություններում՝ բոլոր մակարդակների ընտրությունների ժամանակ»<sup>6</sup>:

Արդարությունը պահանջում է ասել, որ, դժբախտաբար, Հայաստանի երկրորդ հանրապետության տարիներին պատկերը կտրուկ փոխվեց: Բոնատիրական ռեժիմի պայմաններում, երբ երկիրը ղեկավարվում էր մեկ կենտրոնից, և իշխանությունն ամբողջապես կենտրոնացված էր կոմունիստական կուսակցության ձեռքում, բացակայում էր խոսքի, մամուլի, խղճի ազատությունը, բազմակարծությունը, ամեն ինչ նախօրոք պլանավորվում էր, ծրագրվում էր մաս քաղաքական ողջ համակարգի գործունեությունը: Ըստ այդմ, թեև կանանց համար սահմանվում էր տեղերի որոշակի չափաբաժին (միութենական ու հանրապետական օրենսդիր ու գործադիր մարմիններում տեղերի 30-35%-ը տրվում էր կանանց), ու թեև համամասնաբար բոլոր մասնագիտությունների տեղ կանայք ընդգրկվում էին պառլամենտում, սակայն նրանք չէին կարող արտահայտել սեփական կարծիքը, անել առաջարկություններ կամ հանդես գալ որպես ընդդիմություն: Խորհրդային ընտրություններն ավելի շատ մնան էին «նշանակումների», քանի որ մեկ տեղի համար քվեարկվում էր մեկ թեկնածու և ստանում ընտրողների 99,9%-ի քվե: Այսօր գրեթե մույն պատկերն է Զինաստանում և Կուբայում: Հենց մնան իրավիճակն էլ մեծապես նպաստեց մաս քաղաքական կյանքից հայ (և ոչ միայն) կանանց մեկուսացմանն ու կրավորական կեցվածքի ամրապնդմանը, այնուհետև՝ հակազենդերային կարծրատիպերի ձևավորմանը:

Հասարակական հարաբերությունների անկասելի զարգացումները հանգեցրին բոնատիրական ռեժիմի փլուզմանը, և Հայաստանի երրորդ Հանրապետությունը սահմանադրորեն որդեգրեց ժողովրդավարական քաղաքական կարգը՝ իբրև նպատակ հայտարարելով ինքնիշխան, իրավական, սոցիալական պետության կառուցման՝ գերխնդիրը (հողված 1): Նման պայմաններում կանանց իրավունքներն ու ազատություններն առավել ընդգծվում են, և կինը՝ որպես հասարակության լիիրավ անդամ, ստանում է ինքնադրսևորման իրավական հնարավորություն: Սակայն անկախացման տարիներին բուն գարթոնք ապրած համընդհանուր ոգևորությունը, ցավոք, տեղի տվեց մոր իրողությունների առջև, որոնց պատրաստ չէր հասարակությունը ու առավել ևս՝ կանայք:

Հետխորհրդային երկրներում, մասնավորապես Հայաստանի Հանրապետությունում քաղաքական և տնտեսական համակարգերի փոփոխությունն առավել մեծ դժվարություններ ստեղծեց կանանց համար: Խառնաշփոթ առաջացավ հասարակության արժեքային համակարգում, քանզի անցյալից հապշտապ հրաժարումը դեռևս չէր նշանակում իրական առաջընթաց, մոր երևույթների անցավագին արմատավորում: Այս տեսակետից միանգամայն համաձայն ենք Փ. Հարությունյանի այն եզրակացության հետ, որ «նախորդ

<sup>5</sup> Տե՛ս «Женщины в Парламенте...», էջ 24:

<sup>6</sup> «Права человека. Сборник Международных договоров», т. 1, часть первая, Универсальные договоры Организация Объединенных Наций, Нью-Йорк и Женева, 1994, с. 184.

<sup>7</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն», էջ 3:

դարավերջի համակարգային փոփոխումներն առջ եմ բերել հասարակական կեցության այնպիսի վիճակ, որին բնորոշ են անկայունությունը, անորոշությունը, արժեհամակարգային շփոթը, իրացիոնալի ակտիվացումը, գործընթացների աննախադեպ միջազգայնացումը և այլն<sup>6</sup>:

Գաղտնիք չէ, որ անկայացումից հետո մեր հասարակության առջև ծառայած դժվարությունների (ահապոր երկրաշարժի չհաղթահարված հետևանքներ, արցախյան ազատագրական պատերազմ՝ իր բոլոր արհավիրքներով, զանգվածային գործազրկություն ու աղքատացում, աներևակայելի չափերի հասնող արտագաղթ, սոցիալական ու քաղաքական տարաբնույթ լարվածություն և այլն) աշունի բաժինն ընկավ կանանց ուսերին: Բավական է ասել, որ սոցիալական ապահովության նախկին համակարգի փլուզման հետևանքով կրթության, առողջապահության, գիտության ու մշակույթի ոլորտների կրած ահապոր ցնցումներից առաջին հերթին տուժեցին հենց կանայք: Այլ խոսքով՝ հասարակության զանգվածային աղքատացումը հիմնականում ֆեմինիզացվեց, և կանայք, որոնց բաժին ընկավ գործազուրկների 70%-ից ավելին, ստիպված էին կատարելու ամենացածր վարձատրվող տարաբնույթ աշխատանքներ: Այսպիսով, անկայության ձեռքբերումից հետո պլանային տնտեսության փլուզումը, անցումը շուկայական տնտեսությանը, ժողովրդավարական, իրավական պետության կայացմանը միտված քայլերը, հասարակությանը անծանոթ երևույթների (գործազրկություն, աղքատություն, հասարակության ծայրահեղ բևեռացում, սոցիալական ապահովության մեխանիզմների վերացում) հետևանքով կանայք դարձան սոցիալապես առավել խոցելի՝ դառնալով անցումային ժամանակաշրջանի դժվարությունների հիմնական «հասցեստերը»: Էլ չենք խոսում այն մասին, որ այդ ընթացքում հասարակական կյանքի զարգացումներից օրենսդրության ետ մնալու, հասարակական շատ հարաբերություններ օրենսդրորեն չկարգավորվելու կամ օրենսդրության անկատարության, իսկ երբեմն իսպառ բացակայության պատճառով ավելի վատթարացավ իրավիճակը կանանց քաղաքական ակտիվության և ժողովրդավարական գործընթացներին մասնակցելու առումով:

Այս ամենի հետևանքով ավանդաբար հայ ընտանիքի նեցուկ հանդիսացող կինը, երեխաներ կրթող ու դաստիարակող մայրը խիստ ծանրաբեռնվեց ընտանեկան հոգսերով: Աշխատանքի շուկայի կառուցվածքը փոփոխություններ կրեց ի վնաս կանանց, և ընդհանրապես խախտվեց գենդերային հավասարակշռությունը հասարակական կյանքի բոլոր բնագավառներում: Այս պայմաններում կանայք ակնհայտորեն պակասեցին քաղաքական համակարգի տարբեր աստիճաններում, առավել ևս՝ պառլամենտում և կառավարությունում: Ուշագրավ է, որ պատմական հանգամանքների բերումով անցումային շրջանում հանրապետությունում ընթացող բարեփոխումները հիմնականում կրում էին տնտեսական բնույթ, իսկ քաղաքական կյանքը մասամբ ետին պլան էր մղված, որի հետևանքով կանայք ըստ էության դուրս մնացին իշխանության գրեթե բոլոր թևերից:

Ընդհատ է, նույնաման երևույթ տեղի է ունեցել նաև ետխորհրդային գրեթե բոլոր նորանկախ պետություններում, սակայն մեզանում այն դրսևորվել է ամենածայրահեղ ձևով: Թեև ԱՊՀ բոլոր երկրների Սահմանադրությունների մեծամասամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ ևս (հոդված 15) նշված է, որ բոլորը՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ունեն Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված բոլոր իրավունքները, ազատությունները և պարտականությունները<sup>7</sup>, իսկ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» գլխում շեշտվում է 18 տարին լրացած քաղաքացիների անմիջականորեն, կամքի ազատ արտահայտմամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետության կառավարմանը մասնակցելու իրավունքը (հոդված 27)<sup>8</sup>, սակայն այլ է պատկերը իրականում: Այո՛, թե՛ Սահմանադրությամբ և թե՛ օրենքներով սեռերի միջև որևէ տարբերություն չի դրվում հատկապես քաղաքական իրավունքները իրացնելիս,

<sup>6</sup> Գ. Հարությունյան, իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները, Եր., 2003, էջ 6:

<sup>7</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն», էջ 7:

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 10:

բայց ակնհայտ տարբերություն է արձանագրվում «de jure» և «de facto» վիճակները համեմատելիս, քանզի օրենքների գոյությունը դեռևս չի նշանակում, որ փաստացի ապահովվում է իրավահավասարությունը, և ճիշտ ու նպատակային է օգտագործվում կանանց ներուժը քաղաքական համակարգում: 2003 թ. դրությամբ միանգամայն այլ է պատկերը նախկին խորհրդային Միության հանրապետություններում: Խորհրդարանում կանանց ներգրավվածության ամենաբարձր տոկոս են արձանագրվել Թուրքմենիայում (26%), իսկ ամենացածր՝ Հայաստանում և Ուկրաինայում (5,3%): Համեմատաբար վատ չէ վիճակը Տաջիկստանում (12,7%), Մոլդովայում (12,9%), Բելոռուսում (10,3%), Ադրբեջանում (10,5%) և Կիրգիզիայում (10%): Դիտելի է, որ Ռուսաստանի Դաշնության, Ուզբեկստանի և Վրաստանի պառլամենտներում<sup>11</sup> կանայք կազմում են շուրջ 7%:

Ցավով պետք է արձանագրել, որ ժողովրդավարության ուղին որդեգրած Հայաստանի Հանրապետությունում վերջին 14 տարիների ընթացքում էական տեղաշարժեր չգրանցվեցին այս բնագավառում: Այդ է հաստատում պառլամենտական վիճակագրությունը. 1990-95 թթ. կանայք խորհրդարանում կազմում էին 3%, հաջորդ ընտրություններում այդ թիվն ավելացավ և կազմեց 8%, քանի որ «Շամիրամ» կուսակցությունը, որը բացառապես կանանց կազմակերպություն էր, հաղթաբարեց 5%-ի արգելքը, և պառլամենտի անդամ 12 կին պատգամավորից 8-ը ընտրվեց միայն այդ կուսակցությունից: 1999-2003 թթ. պառլամենտում կանայք նորից կազմում էին 3%, իսկ այժմ 131 պատգամավորից միայն 7-ն է կին (5,3%): Հատկանշական է, որ վերջին երեք ընտրությունների ընթացքում մեծամասնական համակարգով միայն մեկ կին է կարողացել հաղթանակ տանել այդ դժվարին պայքարում: Գրեթե նույնն է պատկերը նաև համամասնական ընտրություններում, քանի որ տղամարդիկ են որոշում այն պատգամավորական թեկնածուների ցուցակները, որոնք առաջադրվելու են ընտրությունների ժամանակ, և բնականաբար հիմնականում հնարավոր անցումային տեղերում հայտնվում են տղամարդկանց ազգանուններ: Ինքնին հասկանալի է, որ կուսակցական ղեկավարները «լրջորեն» ընտրություն են կատարում իրենց թեկնածուների միջև՝ նախապատվությունը տալով առավել «հուսալիներին»<sup>12</sup>: Ահա թե ինչու նախորդ խորհրդարանում միայն 3, իսկ գործող խորհրդարանում 6 կին կարողացան տղամարդկանց հետ տեղ զբաղեցնել կուսակցական ցուցակների վերին հատվածում և հայտնվել Ազգային ժողովում: Սա հետևանք էր նաև այն բանի, որ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում» կուսակցական ցուցակներում կանանց համար քվոտա սահմանվեց: Ընտրական օրենսգրքի 100-րդ հոդվածի երկրորդ մասում նշված է, որ «Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով կուսակցության ներկայացրած ընտրական ցուցակում առնվազն 5 տոկոսը պետք է լինեն կանայք: Համամասնական ընտրակարգով կուսակցության ներկայացրած ընտրական ցուցակում կարող են ընդգրկվել նաև անկուսակցականներ»<sup>13</sup>:

Թվում է՝ նույնիսկ ավելորդ է հիշեցնել, որ պառլամենտը և պառլամենտարիզմն իրենց կարևոր դերակատարմամբ էական նշանակություն ունեն պետության մեջ, սակայն նրանց ավանդույթները, հիմնական ինստիտուտները, պետության իրավական բազան դեռևս շատ փխրուն են: Աշխարհում ճանաչված այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք են «պառլամենտարիզմը», «պառլամենտական ժողովրդավարությունը», «պառլամենտական համակարգը», «պառլամենտական ներկայացուցչությունը», ըստ էության լրիվ չեն կայացել Հայաստանի Հանրապետությունում: Վերջիններս Մեծ Բրիտանիայում, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում և այլ զարգացած երկրներում վաղուց կայացած ինստիտուտներ են: Հարկավ, հիշյալ երկրների և ՀՀ զարգացման պատմական պայմանները տարբեր են եղել, հետևաբար տարբեր են նաև ներկայիս հասարակությունները: Չպետք է մոռանալ, որ Հայաստանի Հանրապետությունում ունենք 70-ամյա բռնատիրական ռեժիմից նոր ազատված, հոգեբանական լուրջ

<sup>11</sup> St' u Inter-Parliamentary Union, August 2003, Women in National Parliaments. {Internet} <http://www.ipu.org>.

<sup>12</sup> John Bochel and David Denver. Candidate Selection in the Labour Party: What the Selectors Seek. "British journal of Political Science". 1983. Vol. 13, № 1, pp. 45-69:

<sup>13</sup> «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրք», Եր., 2002, էջ 58:

բարդությունը ունեցող, որը դժվարությամբ ընկալող հասարակություն: Ակնհերև է, որ ոչ օրենք ընդունողները և ոչ էլ կատարողները չեն ապրել ժողովրդավարության պայմաններում, չեն տեսել դրա առավելություններն ու արդյունքները, չեն դաստիարակվել ժողովրդավարական կայացած արժեքներով, այստեղից էլ՝ ակնհայտ շեղումները ժողովրդավարական սկզբունքներից, սակայն դա չպետք է հիմք ծառայի ինքնաարդարացման և առկա վիճակի հավերժացման: Կարծում եմ սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ հանրապետության պատվանետում կանանց չնչին թիվը լավագույն ապացույց է այն բանի, որ մեզանում լուծված չէ կնոջ և տղամարդու իրավահավասարության հարցը, որ առայժմ ոտնահարված են կնոջ սահմանադրական իրավունքները: Մի՞նչդեռ աշխարհի զարգացած երկրների փորձի ուսումնասիրությունը, ինչպես նաև մեր հանրապետության սոցիալ-տնտեսական, քաղաքական կյանքի և հատկապես ընտրական գործընթացների վերլուծությունը ցույց են տալիս, որ երկրի քաղաքական կյանքին հայ կանանց լիարժեք մասնակցության համար կան մի շարք լուրջ դժվարություններ ու խոչընդոտներ, որոնք, հասարակության իսկ շահերից ելնելով, պահանջում են հրատապ լուծում: Ընդ որում, այդ արգելքներն ունեն ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ բնույթ: Եթե օբյեկտիվ, բառի բուն իմաստով բնական, հետևաբար և անհաղթահարելի դժվարություն է այն, որ կինը ծնողական աստվածատուր դերաբաշխմամբ կոչված է մայր լինելու, որի պատճառով միշտ չէ որ կարող է պահպանել քաղաքական խաղի կանոնները և ցանկացած պահի համարժեք ձևով մասնակցել ընտրապայքարին, ուստի հաճախ ստիպված է լինում կամավոր դուրս գալ պայքարից, ապա սուբյեկտիվ, այս դեպքում արդեն հասարակածին ու արհեստական խոչընդոտներ են դարելի խորքից եկող և մերօրյա բազմապիսի գործոններով ամրացած մասնապաշարմունքները, անբանական ու հակաբանական կարծիքները, կարծրատիպերն ու թյուրըմբռումները: Ի հաստատումն ասվածի՝ բավական է հիշել, որ համաշխարհայնացման, բարձր տեխնոլոգիաների ժամանակաշրջանում և արագ փոփոխվող աշխարհում շուրջ 10 տարի կանայք երեխաների պատճառով հետ մնալով իրենց հասակակից տղամարդկանցից, թե՛ մասնագիտական, և թե՛ քաղաքական դիրքորոշման ու ակտիվության առումով, մեծապես տուժում են: Ըստ այդմ, կինը պետք է կարողանա 3-5 տարում լրացնել բացթողածը, ձեռք բերել անհրաժեշտ գիտելիքներ, կայացնել քաղաքականությամբ զբաղվելու որոշում և սկսել քաղաքական պայքար արդեն փորձված տղամարդկանց կողքին: Գաղտնիք չէ և այն, որ կանայք ավելի մեծ արգելքներ են հաղթահարում ծառայողական աստիճանով բարձրանալիս, քան տղամարդիկ, որովհետև քաղաքականության մեջ մտնելու համար պահանջվում է նաև կամք, վճռակալություն ու վստահություն իր ուժերի նկատմամբ: Մյուս կողմից, կա կարծրացած ոչ բարոյացական վերաբերմունք կին ղեկավարների նկատմամբ: Հասարակությունն ավելի սովոր և հակված է տեսնելու տղամարդ ղեկավարներին: Հետաքրքիր է, որ մե՞ն կարծրատիպերն հաճախ ավելի ամուր են նստած ու ավելի ակտիվորեն են գործում հենց կանանց միջավայրում:

Ընտրական պայքարը ենթադրում է նաև ֆինանսական ներդրումներ: Կինը Հայաստանում տնտեսապես անկախ չէ: Քիչ են կայացած բիզնեսով զբաղվող կանայք: Իսկ եթե նրանցից ոմանք անգամ դրամ ունեն, ապա դա դեռ չի նշանակում, թե պատրաստ են մեծ քաղաքականություն մտնելու:

Ֆինանսական դժվարությունները հատուկ են ոչ միայն Հայաստանի, այլև ընդհանրապես աշխարհի կանանց: Այսպես՝ աշխարհում աշխատուժի կեսը լինելով, կանայք ստեղծում են համախառն ներքին արդյունքի 20-35%-ը կամ 11 տրիլիոն դոլար, մի՞նչդեռ, համաձայն ՄԱԿ-ի վիճակագրական տվյալների, երկրագնդի վրա աղքատության մեջ գտնվողների 70%-ը հենց կանայք են: Հետևաբար՝ սպասել, որ այս վիճակում հայտնված կինը կկարողանա քաղաքականության մեջ առաջադիմել, իհարկե իրատեսական չէ: Այսուհանդերձ, կա նաև հարցի մյուս կողմը. այսօր Հայաստանում կանանց կրթական, գիտական ներուժն անհամեմատ ավելի բարձր է, քան տղամարդկանցը: Համոզվելու համար բավական է ասել, որ բարձրագույն կրթություն ստացողների մեջ կանայք կազմում են 63%: Ավելին, որոշակի աճ է նկատվում պետական կառավարման մարմիններում կանանց 63%: Ավելին, որոշակի աճ է նկատվում պետական կառավարման մարմիններում կանանց ընդգրկվածությունն առումով: Օրինակ, ՀՀ Նախագահի աշխատակազմում կանայք կազմում են 48%, կառավարության աշխատակազմում՝ 83%, իսկ Ազգային ժողովի աշխատակազմում՝ 50%: 940 համայնքներից 17-ում ընտրվել են կին ղեկավարներ, որոնց

աշխատակազմի շուրջ կեսը կանայք են: Հետաքրքրական է, որ դատական իշխանության բոլոր առյուծներում կանայք անհամեմատ ավելի են ներկայացված. դատավորների 18%-ը կանայք են, իսկ փաստաբաններից՝ յուրաքանչյուր երրորդը<sup>14</sup>: Վերջապես, դիվանագիտական ծառայության 24 դեսպաններից 2-ը կին են, իսկ դիվանագիտական աստիճան (ռանգ) ունեցողների 25%-ն են կանայք, էլ չենք խոսում այն մասին, որ սոցիալական ոլորտի ողջ ծանրությունն ընկած է կանանց ուսերին: Բավական է ասել, որ առողջապահության համակարգի աշխատակիցների 83%-ը, կրթության ոլորտում՝ 86%-ը, իսկ մշակույթի ասպարեզում 71%-ը կանայք են<sup>15</sup>:

Ինչպես տեսնում ենք, խիստ անհամամասնությունն գոյություն ունի հանրապետության տնտեսական, սոցիալական, գիտական ու մշակութային կյանքում կանանց ունեցած դերի և երկրի օրենսդիր բարձրագույն մարմնում նրանց ներկայացվածության աստիճանի միջև: Սա նշանակում է, որ, իբրև օրենսդիր բարձրագույն մարմին, պառլամենտը պետք է ընդունի այնպիսի օրենքներ, որոնցով հնարավոր լինի ապահովել կանանց քաղաքական ակտիվությունը և շուտափույթ վերացնել վերը նշված անհամապատասխանությունը: Չէ՞ որ խորհրդարանը, իր լիազորություններն իրականացնելիս աշխատում է գործել ժողովրդավարական սկզբունքներին և չափանիշներին համապատասխան, ընդունել բարոյական չափանիշներին և արժեքներին, իրավունքի սկզբունքներին համապատասխանող օրենքներ, կանոնակարգել, ճիշտ ուղղորդել հասարակական հարաբերությունների զարգացումը՝ հաստատելով կարգ ու կանոն և դրանով իսկ ազդել այն քաղաքականության վրա, որն իրագործվում է ժողովրդավարական ռեժիմի պայմաններում, և որով փորձ է արվում կայացնել քաղաքացիական հասարակություն:

Հենց ժողովրդի ներկայացուցիչներից կազմված պառլամենտում տղամարդկանց և կանանց բավարար թվով ներկայությունն արդեն կլինի ժողովրդավարության վկայություն, քանի որ պառլամենտը և ժողովրդավարությունը, սերտորեն կապված լինելով իրար հետ, փոխապայմանավորված են մեկը մյուսով:

Ասվածից հետևում է, որ ներկայացուցչական մարմնում պետք է ապահովվի հասարակության բոլոր շերտերի, սոցիալական բոլոր խմբերի ներկայացուցչությունը, քանզի հենց պառլամենտն է կանոնակարգում հասարակական հարաբերությունները և օրենսդրական հիմքի վրա դնում մնացած բոլոր մարմինների ու կազմակերպությունների գործունեությունը: Չէ՞ որ պետական իշխանության կարգավորիչ գործառնությունը նախ և առաջ դրսևորվում է «պետության և նրա մարմինների նորմատիվ ծագործունեության մեջ»<sup>16</sup>:

Վերը ասվածից հետևում է, որ հանրապետության պառլամենտը պետք է ծավալի հասարակական հարաբերությունների կարգավորմանն ուղղված այնպիսի օրենսդրական գործունեություն, որը, ելնելով իրավունքի գերակայության սկզբունքից, ապահովի սահմանադրությամբ յուրաքանչյուր քաղաքացուն տրված իրավունքները: Ի դեպ, այս կապակցությամբ կցանկանալի ավելացնել, որ սահմանադրական բարեփոխումների շարքում իրավացիորեն ներառված է նաև Սահմանադրության 6-րդ հոդվածը, որով մեր հանրապետությունում «երաշխավորվում է օրենքի գերակայությունը»: Ժամանակն է, որ օրենքի փոխարեն հռչակվի իրավունքի գերակայությունը, որովհետև հանրահայտ է, որ իրավունքը էությունն է, օրենքը՝ սուսկ իրավունքի դրսևորման ձևը, իրավունքի աղբյուրը: Օրենքը իրավունքի կեցությունն է, իրավունքի գոյալիճակը: Հետևաբար, օրենքները պետք է թխեն իրավունքից, պետք է ընդունվեն իրավական օրենքներ: Օրենքի ընդունումից հետո ոչ պակաս կարևոր է օրենքի կիրառումը, նրա պահանջների իրականացումը: Չէ՞ որ բոլոր մարդիկ (տղամարդ թե կին) ծնվում են իրենց անօտարելի իրավունքով և արժանապատվությամբ, որոնք ամրագրված են միջազգային փաստաթղթերով և մեր երկրի սահմանադրությամբ: Ուստի ոչ միայն պետք է հռչակվի, այլև հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կենսագործվի կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը:

<sup>14</sup> Տե՛ս «Հայաստանի կանայք և տղամարդիկ. վիճակագրական զբոյլ», ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Եր., 2004, էջ 66-72:

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 20-27, 35-43:

<sup>16</sup> Տե՛ս Հենրիկ Խաչատրյան, Իշխանությունների տարանջատում և պառլամենտարիզմ, Եր., 1994, էջ 6:

Իրավունքի գերակայությունը՝ որպես հիմնարար, տարրդունակ և բարդ հասկացություն, ներառում է նաև արդարության, օրինականության, հավասարության, մարդասիրության և այլ սկզբունքներ ու համամարդկային արժեքներ, որոնց ստեղծման և կիրառման գործընթացին հավասարապես պետք է մասնակցեն թե՛ կանայք և թե՛ տղամարդիկ: Այստեղից հետևում է, որ պառլամենտը՝ որպես ժողովրդավարության հաստատման կարևորագույն ինստիտուտ, իր կազմում պետք է ունենա հասարակության բոլոր խմբերի, այդ թվում՝ կանանց ներկայացուցիչներին: Բնականաբար, դա միանգամից լուծվող հարց չէ, այլ պահանջում է երկար ժամանակ՝ քաղաքական, իրավական, հասարակական, գաղափարական ու բարոյաբանական միջոցառումների համալիր իրագործմամբ: Ըստ այդմ գտնում են, որ իբրև անհետաձգելի խնդիր անհրաժեշտ է՝

- օրենսդրորեն ավելացնել քվոտաներ կանանց համար, կատարելագործել ընտրական օրենսգիրքը, այն դարձնել առավել ժողովրդավարական և գործուն,
- կուսակցական ղեկավար խորհուրդներում ավելացնել կանանց թիվը, նշանակովի պաշտոններում առաջադրել նաև նրանց,
- կին քաղաքական լիդերներին ուսուցանելու և նրանց առաջընթացը աստիճանական ապահովելու համար ներգրավել կուսակցական աշխատանքներում սկզբնական օղակներից մինչև վերին ատյաններ,
- քաղաքացիական հասարակության կայացմանը օժանդակելու համար ուժեղացնել կին պատգամավորների կապը սոցիալական հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ,
- կանանց հարցերով զբաղվող կազմակերպություններին համախմբել կին թեկնածուների շուրջ, օգնել ֆինանսապես ու բարոյապես,
- օգտագործել ՋԼՄ-ների հնարավորությունները կանանց մասին դրական իմիջ ձևավորելու համար:

**Г. Г. АКОПЯН - Женщины в политической жизни Армении.** - Автор статьи рассматривает вопросы участия армянских женщин в высших эшелонах власти. Отмечает, что, несмотря на высокий образовательный и культурный уровень, потенциал женщин очень мало используется в государственных органах власти. Дает сравнительный анализ участия женщин в парламентах постсоветских и европейских стран, в частности в Республике Армения. Характерная особенность: чем выше экономический и прожиточный уровень страны, тем активнее женщины вовлечены в политическую жизнь. В статье представлены основные факторы, влияющие на степень привлеченности женщин в Национальную Ассамблею Армении, даны рекомендации по усовершенствованию законодательства, по созданию условий, которые сыграют существенную роль в усилении политической активности женщин, их вовлеченности в политические партии, в увеличении числа женщин в парламенте, правительстве и правосудии.